ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի հունիս ամսվա գործունեության վերաբերյալ

Ընթացիկ աշխատանքներ

Նախնական տվյալներով 2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 12,956.0 մլն դրամ՝ պլանավորված 8,100.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 60 տոկոսով կամ 4,856.0 մլն դրամով: Հավաքագրված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ թերակատարվել են 50 տոկոսով կամ պակաս է հավաքագրվել 12,930.5 մլն դրամ:

Հունիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2,510.2 մլն դրամ՝ պլանավորված 2,050.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 22.4 տոկոսով կամ 460.2 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում հաշվառվել է թվով 88, լուծարվել՝ 18 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 2 ստուգում, որի արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 7.2 մլն դրամի չափով հարկային պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 109 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 56-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 33-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 15-ը՝ վաճառքի ցուցադրված ապրանքատեսակների վրա գնապիտակների առկայության և 5 այլ ուսումնասիրություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6,192 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5,942:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով քննված 3 վարչական գործով սահմանվել է 900.0 հազար դրամ վարչական տուգանք:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 51 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում հունիս ամսում կատարվել է վերադարձ 7 վարձու աշխատողի՝ 1.1 մլն դրամի չափով:

Հարկ վճարողների ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և տոկոսների փոխհատուցման նպատակով վճարված հարկերի գումարի վերադարձի ծրագրի շրջանակում կատարվել է 6.3 մլն դրամ գումարի չափով վերադարձ:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 8 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Արցախի Հանրապետության ռեզիդենտ ոչ պետական կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող պետական աջակցության միջոցառման շրջանակում հաշվետու ամսում եկամտային հարկի չափով աջակցություն է տրամադրվել 969 հարկ վճարողի՝ շուրջ 266.0 մլն դրամ գումարի չափով:

ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշման համաձայն՝ հաշվետու ամսում մեկնարկել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով կրած նյութական վնասի չափի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու նպատակով դիմումների ընդունման գործընթացը, որի շրջանակում տրամադրվել են 97 տեղեկանքներ, մերժվել՝ 3 դիմում:

ԱՀ ՊԵԿ նախագահի հրամաններով սահմանվել է «Ռոյալթի վճարողի կողմից 2021 թվականի ռոյալթիի կանխավճարի մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» հայտարարության ձևը, փոփոխություններ կատարվել Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և տրվել առաջարկություններ:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված

գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2021 թվականի 2-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 834 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հանրային իրազեկման աշխատանքները շարունակվել են նաև հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով հրապարակվել են 2020 թվականի տարեկան արդյունքներով հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին են ներկայացվել թվով երկու հայտարարություն:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և վարձու աշխատողներին ու անհատ ձեռնարկատերերին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 19 տեղեկանք:

Հարկային մարմնում կադրային ռեզերվ ձևավորելու նպատակով հաշվետու ամսում կազմակերպվել է հարցազրույց, որին մասնակցել են 20 դիմորդներ:

Հունիս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 610, ելքագրվել՝ 359 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն: